

Նյուեմբերի 21-ից, ինչպես արդեն հաղորդել էր, սկսված են Լիդիդ Բարնայի ներկայացումները։ Նրա րեպերտուարը բաղկացած է զվարճողական շենքային դրամաներից։ Գաղափար սղմվում համար, մենք աշխատեցինք տեսնել տան երկու, բոլորովին իրար հակառակ դերեր մեջ—Ռիչարդ III-ի և Ռոբին Ափամայի դերերում։ Ի՞նչ առաջին և թե երկրորդ պիեսները անօթ են ընթիկցողների մեծամասնության,

այդ պատճառով նրանց բովանդակութեան մասին աւելորդ ենք համարում խօսել: Առաջինի մէջ հանդէս է գալիս մի մարդ, որն իր նպատակներին հասնելու համար չէ խնայում նոյն իսկ իր ամուսնու, եղբայրների արիւնը: մի մարդ, որի ամբողջ կենսանքն անցնում է դաւադրութիւնների և սպանութիւնների մէջ: Նա և վերին աստիճանի չորրորդի է, կեղծաւոր, խաւերայ: Սա և Մարկէթ է, և Տարտիֆ, և Գոն-ժուան, մի խօսքով մի ալանդակ, հրէշաւոր տիպ: Երկրորդը մի աղնիկ, համակրելի բնուորութիւն, մի մարդ, որ իր գաղափարների համար հեռացաւ հարազատ ծնողից, սիրոյ առարկայից: Ակոստան, փանատիկոս իւրայեւացու աչս Վանաբֆան: զաւակը աներկիւղ դիմադրում է բանաւայապետներին, կատաղի խուժանի բը-նունդներին իր համարձակ խօսքով: Կարճ, իր ամբողջութեամբ վերցրած, Ակոստան էնտուզիստ է, իղէալիստ:

Երկու տիպերն էլ սլարդ պատկերացրեց չորհրդալի արտիստը: Բիչարդի դերում, չը նայելով որ մեծ աղօղութեամբ կատարեց նա, չառ ծա-վաճարութեան չարժանացու, որովհետեւ այսպիսի տիպերը՝ որքան աւելի ճշդութեամբ են պատկերացնում, սովորաբար այնքան աւելի հա-կակրանք են յարուցանում հանդիսականի մէջ և նոյն րօպէին անուղ զերակատարը հրէշ է նրա առաջ: Իսկ Ուրիէլը ներկայացմանը հասարա-կութեան հիացման չափ չը կար. մանաւանդ չը-րորը գործողութեան մէջ, երբ նա, բաւութեան չափիլը հագին, դուրս եկաւ սինադոգայից և կատաղի լեզուով սրտի դառնութիւնը թափեց խոտախրտ երայացու խուժած խուժանի զը-լին: Այդ ժամանակի աւելի քան գեղեցիկ էր Բարնայ: Սակայն ախտա, որ հինգերորդ գոր-ծողութիւնը վերջացաւ շատ անշուք, եթէ չա-սենք անհորը: Իր կտակն ասելուց յետոյ նա հեռացաւ բեմից, ապա լսվեց մի թող փառաց ատորճանակի, այնպէս որ Ակոստայի—այս մեծ մարդու վախճանն անցաւ բոլորովին անզգալի և հետեւապէս առանց տալաւորութեան: Հանդու-ցակ Ալեամեանն այդպէս չէր վերջացնում:

Բարնայի ներկայացումները տեղի ունեն «Պա-րադիզ» անհորը թատրոնում, ուր ասել զգեւու տեղ չը կայ: Տոմարկները օր առաջ անուլած են, չատերի ցանկութիւնը՝ տեսնել Բարնային, մնում է միայն ցանկութիւն և այդ ոչ այն պատճառով, որ հանճարի սիրահարները տոմ-սակները թառ աչ են անում, այլ չորհրդի մի քանի չարկներին, որոնք տոմարկները զարձրել են իրանց համար չափազանց, ասեալի նիւթ: Մենք ևս ստիպված եղանք ակամայից իրախու-սել այդ անարգ վարմունքը՝ վճարելով 42 կօ-պէկանոց տոմարկին 100 կօպէկ: Ողէտայում այդ կողմից լաւ է, մի մարդուն երեք տոմարկից ա-ւելի չեն տալիս:

Ա. Տ. Յ.

ՆԱՍԱԿԱ ԿՐԱՍՆՈՎՈՎՍԿԻՑ

Դեկտեմբերի 10-ին Գաղթականների մի խումբ, քսան հոգուց բաղկացած, այստեղ ևս հասաւ: Դրանք անմի-ջապէս փողոցները թափվեցան, և սկսեցին խա-նութից խանութ մանգալով մի կտոր հաց մու-րալ, իրանց քաղցը յաղեցնելու: Այդ խեղճերը դողդոջուն քայլերով, գունատ դէմքով, չըջում են փողոցից փողոց բաղդ օրհնելու: Ինչ անի թըշ-ւառ գաղթականը տարակ այս եղանակին, չու-նի ուտելիք, չունի մի փաւա՝ որով իր մերկ մարմինը ծածկի, չունի մի անկիւն, ուր այս ցրտերից պատուարով: Համակրութեան արժա-նի են այստեղի մի քանի հարուստ վաճառա-կաններ, որոնք գաղթականներին ընդունեցին իրանց մօտ, քաղցից ու ցրտից պահպանելու համար: Մի քանի օր գաղթականները մեզ մօտ մնալով, ճանապարհվեցան դէպի աւելի մեծ և հարուստ քաղաք, որպէս զի կարողանան իրանց կենսքը ընդ միշտ ապահովել: Նրանք զուրկ չը մնացին այստեղի ժողովրդի դրամական նուէր-ներին:

Կ. Յ.

ՆԱՍԱԿԱ ԽՄԲԱԳՈՐԹԱՆ

(Շարունակութիւն)

Ատարախան, նոյեմբերի 12-ին

Դործն այդ դրութեան մէջ մնում է մինչև անցաւ թիւ հոկտեմբերի 13-ը, երբ ստացվում

է խաչատուր քահանայ փանեանցի մի նոր յայ-տարարութիւնը, որով խնդրում էր չբարեհաճել առ այժմ ինչ ինչ թիւրիմացութեանց պատճա-ռով յետաձգել ի Ղուբայ տեղափոխութեան հարցը, ցնոր տնօրէնութիւն Սինօղի: *) Այս յայտարարութեան վրա թեմի ներկայ առաջնոր-դը մակագրում է Յետաձգել ըստ խնդրանացն: Բայց որովհետեւ Շամախու կոնսիստորիան այս տարվայ յունվարի 30 դրութեամբ յայտնելով, որ Ղուբայի միակ քահանայ և գործակալ տէր Ա-ւազ Աւարեանցը զառամութեան պատճառով հրաժարվում է քահանայութիւնից, պահանջում էր Վիտանակի առաքել զխաչատուր քահանայ փանեանց ի Ղուբա, համաձայն տնօրէնութեան Սինօղի Ս. Եփրեմի, վասն որոյ մնում էր տալ Ասիաքաղի ժողովրդին մի այլ քահանայ: Բայց ամենից դժուարն էլ հէնց այդ էր: Ասիա-քաղից յետոյ մի մի հայ քահանայ կան միայն Ղալարվազ և Մերվ քաղաքներում և տեղերի հեռաւորութեան պատճառով Ասիաքաղի ժողո-վրդի հօվուութիւնը նրանցից ոչ մէկին չէր կա-րել յանձնել. իսկ թեմի միւս տեղերից ժամա-նակաւոր մէկին ուղարկել Անդրկասպեան երկրի-րը նոյնպէս հնչաւ չէ: Միակ ելքը մնում էր զանել քահանայացուն: Եւ անա ամենից յարմար քահանայացուն ինքն յայտնվում է. Ղուբայի հա-յոյ եկեղեցական ծխական զարդաների աւազ ու-սուցիչ Աւետիս Աղբալեանց խնդրաբով նոյն յունվարի 17-ին դիմելով թեմիս առաջնորդին՝ խնդրում է իրան առաջարկել իբրև քահանայացու Ասիաքաղի: Նորին սրբաշնութիւնը այդ խնդ-րելը յանձնում է կոնսիստորիայիս այսպիսի մա-կագրութեամբ. «Պահանջել ի խնդրանութէն ըզ-կարեւոր թուղթս և հարցանել դժոժարութիւն ժողովրդեան Ասիաքաղի վասն ձեռնադրութեան նորա և ըստ այսմ կարգադրել: Այս մակագրու-թեան համաձայն կոնսիստորիան այս տարվայ փետրվարի 9-ին հրամանագրում է Ասիաքաղի եկեղեցու երեցիութանին... Էկազմել զժողով ընդ-հանուր հայ ժողովրդոց քաղաքից և առաջադրել նմա, զի եթէ համաձայն են առ ձեռնադրութիւն զայլը Աւետիսի Աղբալեանց ի քահանայ վասն աղօթատան և ժողովրդեան Ասիաքաղի ի տեղի խաչատուր քահանայի, յայնժամ յօրինեալ զհա-մախօսական և վաւերացուցեալ առաքել ի անու-րէնութիւն կոնսիստորիայիս: Ատեանս ոչ աւե-լորդ վարկանի տալ զիտել ժողովրդականաց, թէ Աղբալեանցն աւարտեալ է դուռնում զարդացանք մասին ձեռնարանի ս. Եփրեմի և ի ներկայ ու-սումնական ամի էր աւազ ուսուցիչ եկեղ. ծխա-կան զարդի հայոց Ղուբայի: Մինչ այդ սկզբը-նական կարգադրութիւններն էին արվել դեռ, քահանայացու Աւետիս Աղբալեանցը փետրվարի 23-ին գրում է Ս. առաջնորդին. «Կոնսիս-տորիայի հրամանի համաձայն թէև ուղարկեցի վկայականներս, բայց որովհետեւ Նուխուց ևս ստացայ հեռագիր, որով նոյնպէս նոյն վկայա-կաններս ևս ուղարկ, ինձ իբրև քահանայացու առաջարկելու յիշեալ քաղաքի համար... ուստի ամենախոնարհաբար խնդրում եմ, եթէ իմ քա-հանայանալու Ասիաքաղի ծխականաց վրա հաւա-նական է և հեռու որ և է կանկածից, յայտնել ինձ, որ ես մերժեմ նուխեցիներին, իսկ հակա-ռակ դէպքում ընդունեմ:»

Մի կողմից չունեալով որ և է կանկած Աս-իաքաղի ժողովրդին հաւանութեան մասին ըստ ամենայնի համապատասխան քահանայացուի նկատմամբ, միւս կողմից աչքի առաջ ունենա-լով՝ որ Աղբալեանցից յետոյ չը կայ աչքի առաջ և հաղիւ թէ չուտով գտնվի մի այլ յարմարաւ-րը՝ Ս. Առաջնորդի բարեհաճութեամբ կոնսիս-տորիան Աղբալեանցի վկայականները ներկայաց-նելով Սինօղին այս տարվայ մարտի 20-ին խնդրեց ձեռնադրութեան հրամանը, որպէս զի ժողովրդի համախօսականի ստանալուն պէս ձեռնադրութիւնը չուշանայ: Ձեռնադրութեան հրամանն ստացվում է մայիսի 22-ին և ձեռնա-դրութիւնը կատարվում է օգոստոսի 25-ին:

Որովհետեւ ամբողջ եթմի ամովայ ընթացքում Ասիաքաղի ժողովուրդը չէ պատասխանում կոն-սիստորիայի փետրվարի 9-ի հրամանին իր յօժա-րութեան կամ անյօժարութեան մասին, մի կող-մից այդպիսի անբացատրելի լռութիւնը, միւս կողմից Շամախու թեմի գերապատեալ առաջնոր-

*) Իսկ ներքալ տարվայ ապրիլի 5-ին ստացվում է մի այլ յայտարարութիւն, որով փանեանց քահանայ յայա-նում է կոնսիստորիային որ ոչ շատ յարեւել պատճառ-ներով հրաժարվում էմ մագրութիւնից թողնել Աս-իաքաղ և տեղափոխվել ի Ղուբա:

զի տեղափոխելի 12-ի գրութեամբ նորոգած պահանջը փանեանցին Ղուբա ուղարկելու մա-սին Սինօղի հրամանի համաձայն, ստիպում են Ատարախանի թեմի իշխանութիւնը նորոգած Շամախու քահանային ուղարկել Ասիաքաղ, և փա-նեանցին պատրիարք Գրիգոր Ղուբա: Ինչու ար-դեօք ժողովուրդը կոնսիստորիայի կրկնակի հրա-մաններից ոչ մէկին չը պատասխանեց,—հաս-տատապէս ասել դեռ չէ կարելի, բայց որ ոչ թէ տոնջին հրամանի վրա անցած մի տարին, այլ և երկրորդի վրա անցած եթմի ամիսն էլ բաւական ժամանակ էր, եթէ ոչ մի քահանայա-ցու ընտրելու, գոնէ առաջարկածի մասին «ոչ կամիմք» ասելու:

Գալով նորընծայ Շամախու քահանայի Ասիա-քաղի հօվիւ կարգելուն, հոգևոր իշխանութիւնը հարկաւոր է համարում յայտնել ի միամտութիւն տեղական ժողովրդի այն մասին, որ իրանց ընտ-րողական իրաւունքն արհամարհված են կարծում, թէ ինքն իշխանութիւնը դարձեալ պատրաստ է յանուն և ի յարգանս այդ ընտրողական իրա-ւունքի յետ կանչել Շամախու քահանային այն ժամանակ, երբ փանեանց քահանայի այնտեղից հեռանալուց յետոյ իրանք օրինական համախօ-սագրով կընտրեն իրանց համար արժանիքով հա-մապատասխան մի քահանայացու և կառաջարկեն ձեռնադրութեան: Թող միամիտ լինեն, որ հո-գևոր իշխանութիւնը, որը երբեք չէ կարող ի-րան ներել ժողովրդական իրաւունքի դէմ գոր-ծել, երբեք չի էլ տառանդի յետ կանչել իր ուղարկած քահանային, քանի որ նրա համար խնդրողներ մէկ տեղի փոխարէն երկուսն են:

Ատեալապիս Ատարախանի հայոց կոնսիստո-րիայի՝ Ս. Տէր-Պետրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՈՐՈՐ

Մեզ հեռագրում են Կ. Պոլսից, դեկտեմբերի 16-ից, ուսապ գործակալութեան միջոցով. «Դեկ-տեմբերի 15-ին սկսվեց ներուսն ստացած հա-յերի բանտերից արձակելը: Պատրիարքարանի հրամանով, ամբողջ կայսրութեան մէջ գտնացո-ղական մաղթանքներ կը կատարվեն»:

Անցեալ անգամ արդէն հաղորդեցինք, որ մի ինչ որ Յովնանէս Եպիսկոպոս Գաղանճեան, ինքնակալ կերպով, թիւրք օտարկաններին աջակ-ցութեամբ իրան յայտարարել է Սին հայոց կա-թողիկոս: Մանրամասնութիւնները մեր ընթեր-ցողները կը գտնեն «Մշակի» միւս համա-րում, Կիլիկիայի թղթականութեան մէջ: Կ. Պո-սի նոր պարտաբար Սրմանեանի պարտքն է անմիջապէս բողոք բարձրացնել այդ ապօրինի կա-թողիկոսութեան դէմ, և տաղալել տալ այդ վարձկան Եպիսկոպոսին, որ հաւանորէն պատ-կանում է Ալըղեան-Բարթողիմէոսեան ամօթալի խմբին...:

Աւելորդ չենք համարում հաղորդել ընթեր-ցողներին, որ Շուշու հայոց կոնսիստորիան զան-գատ է ներկայացրել Թիֆլիսի դատաստանական պալատի պրօկուրօրին «Մշակի» խմբագրութեան դէմ, մեղադրելով մեր խմբագրութիւնը գիֆ-ֆաւաւցի ալի մէջ:

Այսօր տպագրում ենք Ատարախանի հայոց կոնսիստորիայի նամակի վերջը Ասիաքաղի քա-հանայական հարցի մասին, մի հարց, որ բաւա-կան Վիտանակից զցեց Անդրկասպեան երկրի փոքրիկ հայ կօթնիկայի մէջ: Մեզ հաճելի է Աս-իաքաղի հայերի այն բաւուն ցանկութիւնը (եթէ միայն նա աղաւ է յետին դիտումներից) պաշտ-պանելու իրանց իրաւունքները, և հէնց այդ տե-սակեմից՝ կրկնակի հաճելի է Ատարախանի թե-մական առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի որոշումը, ինչպէս այդ երևում է կոնսիստորիայի նամակից, թող չը տալ, որ խախտվի ևս ժողովրդական ընտրողական իրա-ւունքները, յայտնելով, որ կը հաստատվի այն քահանան, որին ժողովուրդը կը ընտրի: Այդ համակրելի յայտարարութիւնից յետոյ, ասիա-քաղցիները հանգիստ խղճով կարող են ընտրել նոյն իսկ Աղբալեան քահանային, ցոյց տալու համար, որ խնդրը սկզբ ունի ինչդի է, և ոչ թէ անձնատուրութեան: Սրանով էլ փակում ենք այդ վէճը «Մշակի» էջերում:

Կախեթում շրջապատում հիւանդութիւն երեւա-լուց յետոյ, մեզ համար մեծ նշանակութիւն են ստանում բոլոր այն փորձերը, որ կատարվում

են Ֆրանսիայում այդ հիւանդութեան դէմ կուե-լու համար: Նորբեր Ֆրանսիայում կայացու մա-նագէտների մի ժողով, որի եղբայրացութիւնը այն է, որ բլէկրօտի դէմ կարելի է կուեւել:

Այս օրերս Թիֆլիս է վերադարձել հողաչափ-ների այն խումբը, որ գնացել էր Երևանի նա-հանգի ձմեռային արօտները չափելու և ուսում նասիրելու համար: Հետազօտված են հինգ զաւա-ռի արքունական արօտները, այն է Եփրատի, Սուրմալու, Շարուր - Կարապաղեակի և Կա-լիփեանի: Ուսումնասիրութեան նպատակն է կարգաւորել արօտներից օգտվելու դրութիւնը, և կազմել քուրդերին հողաբաժին տալու ծրա-գիրը:

Հինգշաբթի, դեկտեմբերի 19-ին, վրաց աղ-նուականների թատրոնում, հայոց դերասանները, մասնակցութեամբ սիրողներ օր. Խիթարեանի և պ. Մուրադեֆեանի, ներկայացնելու են, ի նպատակին Չաբէլի, Պօսեթիլինի «Որվան չա-րիք» դրաման: Տիկին Չաբէլ մեր բեմի համեու ոյժերից մէկն է. երկար տարիներ շատ զրկանք-ներ կրելով, բարեխղճաբար ծառայել է բեմին և այժմ նիւթապէս շատ նեղ զրութեան մէջ գտնվելով, կարօտ է հայ հասարակութեան իրա-խուսանքին և օգնութեան: Ի դէպ: Ուրախալի է, որ օր. Խիթարեան, որը իբրև սիրող շատ ան-գամ մասնակցել է հայոց ներկայացումներին, մտադրութիւն ունի բողոքովին նուիրվել, կանա-ցի ուժերից զուրկ հայոց բեմին: Օրիորդը այդ երեկոյ դուրս է գալիս Երևանի պատասխանա-տու դերում:

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են, «Այստեղի հրէա-ների մէջ մի դարչելի սովորութիւն է տարած-ված—ամուսնացնել աղջիկներին երեսպական հասակում՝ սկսած 12 տարեկանից: Այս օրերս, օրինակ, ակնառատա եղանք մի 13 տարեկան հրէուհու պատկազրութեան: Հետաքրքրական այն էր, որ ընտրահարս հրէուհին, չը նայելով իր մօր յորդորներին, չէր ցանկանում բաժանվել իր ընկերուհիների խաղից, մինչև որ փեսայի գալուստը ստիպեց նրան հագնել ամուսնական զգեստը: 18—20 տարեկան աղջիկը, հրէաների կարծիքով, համարվում է մաղանդա անցկացած»:

ԱՍՏԱԿԱԿՈՒՄ մեզ գրում են, «Մօտ օրերս վախճանված Մահաթի-Թոմաս Սալոմեան, մահ-վանից առաջ, իր սուղ միջոցներից, կտակով 200 րուբլի է նուիրել բարեգործական նպատակով, որից 100 ր. եկեղեցուն, 80 ր. Բարեգործական ընկերութեան Արաքալաքի հիւղի ապագայ ար-հեստանոցին՝ յատուկ նուէր, և 20 ր. էլ յօգուտ տեղական աղքատներին»:

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Կ. Պոլսէն Տրապիզոն եկած հեռագիր մը կը հաղորդէ թէ երէկ, դեկտեմբերի 11/23-ին, ժամը 8-ին բանտարկեալները ազատ թողվեցան— Այստեղի, Տրապիզոնի հայ բանտարկեալները դեռ կը մնան: Կարին 250 հայեր կան բանտին մէջ: Երեւա ալ նոր ձեւակալութիւններ տեղի ունեցած են: Բաւէնի մօտերը հայ խումբ մը, 18 հոգիէն բաղկացած, 3—4 ժամու չափ կուի ունե-ցած է թիւրք զինուորներու հետ, մէկ հայ է մե-ռել, իսկ զինուորներէ և զրացի մասնակցող բըր-դերէ 5 մեռեալ ու 7—8 ալ վիրաւոր: Շահայի (Տրապիզոնի գիւղերէն մին) Շաթըր-օղլի Միք-թատ պէյը ութը հօգուց բաղկացած թիւրք աւա-զակային խմբակով սկսած է հայ գիւղացիները չարաչար կերպով կողտուտել:

Խաղիլայի նախկին մինիստր սինիօր Կրիստիլ, խօսելով «Daily News» լրագրի թղթակցի հետ, ասեց հետեւալը. «Երեւեան խնդրը շատ մեծ և բաղադրեալ խնդիր է: Եւրօպական պետու-թիւնները կարող կը լինէին նրան վճռել, բայց վախենում են, որ այդ խնդրը առիթ կը տայ պա-տերազմի: Պետութիւնները զգուս են, որ իրանց կրաւորական դերը Թիւրքիայի բարբարոսութիւն-ների վերաբերութեամբ մի յանցանք է մարդ-կայնութեան դէմ, բայց ընդհանուր եւրօպական ընդհարումի երկիւղը նրանց կանգնեցնում է: Կրիստիլ այն կարծիքը յայտնեց, որ Եւրօպայի համար մանաւանդ աւելի դժուարացաւ այդ խնդ-ը»:

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. квз.